Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-218-26.02.2013-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի փետրվարի 8-ի ՀՕ-21-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1 մասը լրացնել նոր 7.1) կետով հետեւյալ բովանդակությամբ՝

7.1) կազմակերպության ստանդարտ՝ իրավաբանական անձանց եւ/կամ անհատ ձեռնարկատերերի կողմից ընդունված ստանդարտ:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 1 մասը լրացնել նոր 4-րդ կետով հետեւյալ բովանդակությամբ՝

«4) հաստատում եւ պետական գրանցման է ներկայացնում տեխնիկատնտեսական եւ սոցիալական տեղեկատվության դասակարգիչներն ու դրանց փոփոխությունները.»:

Հոդված 3. Օրենքի 13-րդ հոդվածի 1 մասը լրացնել նոր 5) եւ 6) կետերով հետեւյալ բովանդակությամբ՝

«5) Տեխնիկատնտեսական եւ սոցիալական տեղեկատվության դասակարգիչները,

6) Կազմակերպության ստանդարտները»:

Հոդված 4. Օրենքի 15-րդ հոդվածից հետո լրացնել նոր «15.1» եւ «15.2» հոդվածներ հետեւյալ բովանդակությամբ՝

«Հոդված 15.1. Տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգիչները

1. Տեխնիկատնտեսական եւ սոցիալական տեղեկատվության դասակարգիչների մշակումը, հաստատումը, վարումը եւ կիրառումն իրականացվում է ստանդարտացման ազգային համակարգի պահանջներին համապատասխան:

2. Միջազգային, միջպետական կամ այլ պետությունների դասակարգիչները կարող են կիրառվել Հայաստանի Հանրապետությունում՝ ստանդարտացման ազգային համակարգի պահանջներին համապատասխան:

3. Տեխնիկատնտեսական եւ սոցիալական տեղեկատվության դասակարգիչներն ու դրանց փոփոխությունները ենթակա են լիազորված պետական մարմնի կողմից հաստատման եւ պետական գրանցման:

Հոդված 15.2. Կազմակերպության ստանդարտները

1. Կազմակերպության ստանդարտները մշակում, ընդունում, դրանցում փոփոխություններ կատարում, չեղյալ հայտարարում եւ հաշվառում են իրավաբանական անձինք եւ/կամ անհատ ձեռնարկատերերը: Կազմակերպության ստանդարտները մշակվում են արտադրանքի տեխնիկական պահանջների եւ նորմերի սահմանման, ինչպես նաեւ արտադրության կազմակերպման եւ կատարելագործման նպատակով:

2. Կազմակերպության ստանդարտները չպետք է հակասեն տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին»:

Հոդված 5. Օրենքի 20-րդ հոդվածը լրացնել նոր 2.1 մասով հետեւյալ բովանդակությամբ՝

«2.1) «Ստանդարտացման մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի նոյեմբերի 9-ի ՀՕ-18 օրենքի համաձայն կամ ի կատարումն դրա ընդունված նորմատիվ իրավական ակտերը շարունակում են գործել այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքին եւ «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

հ/հ	Հեղինակը	Հոդված (մաս, կետ, ենթակետ)	Առաջարկի բովանդակություն	Եզրակացություն
	1	2	3	4
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Ռուզաննա Մուրադյան	«Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-20-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) հոդված 9-ի 13-րդ կետ.	Քանի որ խորհուրդը, լինելով ՊՈԱԿ-ի կառավարման բարձրագույն մարմին, իրավասու է իրականացնել կառավարման գործառույթ տվյալ ՊՈԱԿ-ի նկատմամբ և չի կարող կատարել հոդված 9-ի 13-րդ կետում նշված գործառույթը՝ «համակարգում է Հայաստանի Հանրապետությունում ազգային, միջազգային և տարածաշրջանային հավատարմագրման աշխատանքները» բառերը հանել:	Ընդունվել է:

		Օրենքի հոդված 9-ի 3-րդ կետ.	Հոդված 9-ի 3-րդ կետը առաջարկում եմ վերանայել՝ հանելով ՊՈԱԿ-ի տնօրենի վրայից խորհրդի քարտուղարի պարտականությունը, քանի որ ընդունված է, որ խորհրդի ինչպես նախագահը, այնպես էլ խորհրդի քարտուղարը պետք է լինեն խորհրդի անդամներ և հաշվի առնելով, որ հաստատության տնօրենը չի կարող լինել խորհրդի անդամ, հետևաբար խորհրդի քարտուղարը չի կարող լինել նաև տվյալ ՊՈԱԿ-ի տնօրենը:	Ընդունվել է:
		Օրենքի հոդված 24	Օրենքի 24-րդ հոդվածի 1 մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ և լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով՝ «1. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի մայիսի 26-ի ՀՕ-82-Ն և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի	Ընդունվել է:

			Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքների համաձայն տրված հավատարամագրման վկայագրերը գործում են մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը: Այն հավատարմագրման վկայագրերը, որոնց գործողության ժամկետը չի լրացել մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը՝ գործում են մինչև դրանց գործողության ժամկետի ավարտը: 2.Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2016 թվականի մարտի 31-ը համապատասխանության գնահատման յուրաքանչյուր մարմնի հավատարմագրումը մեկ անգամ կարող է իրականացվել վերապահումներով: Յուրաքանչյուր համապատասխանության գնահատման մարմնի հավատարմագրման վերապահումները հաստատվում են Խորհրդի որոշմամբ: Հավատարմագրման վկայագրում վերապահման մասին կատարվում է համապատասխան նշում:	

			Վերապահումով տրված հավատարմագրման վկայագիրը գործում է առավելագույնը մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը: Հավատարմագրման վերապահումները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված համապատասխանության գնահատման մարմինների հավատարամագրման կարգով:»:	
2.	ՀՀ կառավարություն	«Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) հոդված 1	1-ին հոդվածում նշված 5.1 կետում «վճարները, ինչպես նաև համապատասխանության գնահատման մարմնի և ճանաչված օտարերկրյա համապատասխանության գնահատման մարմնի տարեկան անդամավճարի չափը» բառերը փոխարինել «վճարման, ինչպես նաև համապատասխանության գնահատման մարմնի և սույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասում նշված համապատասխանության գնահատման մարմնի տարեկան անդամավճարի վճարման չափը և	Ընդունվել է:

			կարգը.» բառերով:	
		Նախագծի հոդված 2	2-րդ հոդվածի 5-րդ կետում «մարմինների կողմից տրված հավատարմագրման վկայագրերը և հաստատում այդպիսի վկայագրեր ունեցող համապատասխանության գնահատման մարմինների ցանկը» բառերը փոխարինել «մարմիններին և հաստատում դրանց ցանկը.» բառերով:	Ընդունվել է:
		Նախագծի հոդված 3	Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ «3. Հավատարմագրման ազգային մարմինը համապատասխանության գնահատման մարմիններին հավատարմագրող Հայաստանի Հանրապետության միակ մարմինն է:»:	Ընդունվել է:

		Նախագծի հոդված 4	Օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասում ուժը կորցրած ճանաչել 12-րդ կետը:	Ընդունվել է:
		Նախագծի հոդված 6	Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ «3. Միջազգային ճանաչում ունեցող օտարերկրյա հավատարմագրման մարմինների միակողմանի ճանաչման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Հայաստանի Հանրապետությունում գործող, միջազգային ճանաչում ունեցող միակողմանի ճանաչված օտարերկրյա հավատարմագրման մարմինների կողմից հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինները պետք է գրանցվեն հավատարմագրման ազգային մարմնում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի սահմանած կարգով:»:	Ընդունվել է: